

ԱՀԱԳՆԵՐՈՒ ԽՈՒՄԲԻ 1982-ի ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՓԵՏՐՈՒԻԱՐ 6, 1983

- - - - -

Աստուծոյ ողորմութեամբ տարի մը եւս բոլորեց Աւագներու մեր խումբը:

Օդի նպաստաւոր շրջաններուն ունեցած ենք մեր հերթական ժողովները, որոնց ընթացքին իրարու ընկերակցութիւնը վայելած ենք, հաճելի ժամանց ունեցած ենք, շահեկան նիւթերու եւ մեր կեանքի պարագաներուն մասին խօսակցութիւններունեցածենք եւ մանաւանդ մեր իրարու քով գալը արժեցնող օգտակար եւ հետաքրքրական դասախոսութիւններ լսած ենք մեր սիրելի Հովհեն: Արդէն իրեն կը պարտինք մեր խումբի գոյութիւնը. ան է որ ամէն անգամ իր մեքենայով կուգայ մեզի՝ փոխադրելու մեր նկեղեցին, ուր Կունենաք մեր այս հոգեպարար հանդիպումները:

Մենք երախտապարտ ենք Տէր Հօր, ինչպէս նաեւ շնորհակալ ենք այն ազնիւ տիկիններուն, որոնք նեցուկ կեցած Տէր Հօրը, իրենք եւս ներկայ կը ըլլան օգնելու համար փոխադրութեան, ինչպէս նաեւ հիւրասիրութեան մէջ: Անոնք են. Տիկ. Այիտա Թիզանի, Տիկ. Անահիտ Զուխաշեան եւ Տիկ. Նոյեմ Փօլատեան:

Մեր կարողութեան չափով ջանացած ենք օգտակար ըլլալ մեր նկեղեցւոյ ու մասնակցիւ անոր կեանքին ու գործունէութեանց: Մեծ Պահոց ընթացքին մենք եւս բեժին առինք Ուրբաթ օր մը ճաշ հայթայթելու եւ մասնակցելու երեկոյեան պաշտամունքին ու յայտագրին: Ուրիշ ատեն ալ հերթական մեր ժողովներէն գոյացած անդամակնարով, ինչպէս նաեւ ուտեստեղէններու վաճառումով մեր գանձին մէջ գոյացած է աւելի քան 1,000 տոլար ներկայիս:

Տարուան սկիզբը Տիկ. Նուարդ Յակոբեանի մահը սգացինք:

Այս տարի ալ մեր խումբի ատենապետութիւնը շարունակեց Տիկ. Աղաւնի Սահակեան, ատենապրութիւնը Տիկ. Սըրուհի Թորոսեան եւ գանձապահի պաշտօնն ալ Տիկ. Մինա Մանուկեան:

Վահագի Անհայրի
Կաթողիկոս